**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

«20» փետրվարի 2023 թվական N 15

**ք.Ստեփանակերտ**

## *«ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՏՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

«Լիցենզավորման մասին» օրենքի 20-րդ, 22-րդ հոդվածների, 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի լիցենզավորման հանձնաժողովի 2023 թվականի փետրվարի 20-ի N 02 եզրակացությունը՝

***ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝***

1. Կասեցնել «Արսեն Հարությունյան» անհատ ձեռնարկատիրոջը 2017 թվականի նոյեմբերի 14-ին տրված բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրության և (կամ) վաճառքի N 000018 լիցենզիայի գործողությունը՝ մինչև օրենքով սահմանված հաշվետվության ներկայացումը:

2. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնին ապահովել՝

1) լիցենզիայի գործողության կասեցման մասին տեղեկությունների գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) սույն հրամանի հրապարակումը նախարարության պաշտոնական ինտերնետային կայքէջում:

***Հրանտ Սաֆարյան***

***Պաշտոնական հրապարակման օրը՝ 20 փետրվարի 2023 թվական***